Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 02

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան

29 ապրիլի 2026թ.

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ, 19-րդ և 22-րդ կետերը՝ կայացել է Կառավարման խորհրդի նիստ՝ հեռակա քվեարկության միջոցով:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Համբարձում Մաթևոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Դավիթ Խուդաթյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Տաթևիկ Սարգսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տարոն Հակոբյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Յուրիկ Հակոբյան	Հայաստանի երկրաբանների միություն ՀԿ
Բարդուխ Գաբրիելյան	Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ձկնաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Շահեն Խաչատրյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Բացակայում է՝	
Սուրեն Մելիքյան	Մանթաշյանց գործարարների միություն
Տիգրան Դադունց	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին հավանություն տալու մասին:

Կառավարման խորհուրդը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին:

Կողմ 8, Դեմ 0

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Կառավարման խորհրդի անդամ Արման Պողոսյանը օրակարգային հարցին քվեարկել է՝ պայմանով, որ ինչպես նշված է նախագծի ընդունման հիմնավորման մեջ, վարչության հաստիքների ավելացումը տեսչական մարմնի ֆինանսավորման ծավալի ավելացման չի հանգեցնի:

Միևնույն ժամանակ, հայտնել է, որ ներկայացված նյութերում վարչության գործող հաստիքների հանրագումարային թիվը սխալ է նշված՝ 13-ի փոխարեն նշված է 17: Այս պարագայում վարչությունում կստացվի ոչ թե հաստիքների թվի 1-ով կրճատում (ինչպես նշված է), այլ՝ 3-ով ավելացում:

Ինչին ի պատասխան ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը պարզաբանել է, որ վերոնշյալ դիտարկումը հաստիքների թվի հետ կապված տեխնկական վրիպակ է, հաստիքների քանակը ներկայումս 13 է, փոփոխության արդյունքում կդառնա 16:

Քվեարկությամբ որոշումն ընդունվել է ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ) _____ Հ. Մաթևոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ
(խորհրդի քարտուղար) _____ Վ. Բարսեղյան